Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Լրամշակված տարբերակ

Կ-002-24.05.2017-ԱՍ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-1-Ն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) 1-ին նախադասությունից հանել «մինչեւ 2017 թվականի հուլիսի 1-ը» բառերը.

2) 2-րդ կետից հետո լրացնել նոր պարբերություն.

«2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված այն անձանց, ովքեր դատախազի կամ հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակվել են մինչև 2017 թվականի հունիսի 1-ը՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելուց հետո»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը եւ առկա խնդիրները.

Ի կատարումն «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 22.12.2010թ. ՀՕ-243-Ն օրենքի դրույթների՝ ընդունվեց ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի «Դատախազի պաշտոն զբաղեցրած անձին կենսաթոշակ նշանակելու, վճարելու, ինչպես նաեւ ստաժը հաշվարկելու կարգը սահմանելու մասին» N 1129-Ն որոշումը, որի 1-ին կետով սահմանված կարգի 4-րդ կետի համաձայն՝ դատախազին «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով սահմանված երկարամյա ծառայության կենսաթոշակ է նշանակվում, եթե նա՝ դատախազի պաշտոնից օրենքով սահմանված կարգով ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

2014 թվականի փետրվարի 4-ին ընդունված եւ նույն տարվա հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նշված իրավակարգավորումները փոխվեցին եւ ՀՀ կառավարության 28.07.2011թ. N 1129-Ն որոշումը ՀՀ կառավարության 28.08.2014թ. N 890-Ն որոշմամբ ուժը կորցնելուց հետո նշված իրավակարգավորումն իր արտացոլումը գտավ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ 2 014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաեւ մինչեւ 2017 թվականի հուլիսի 1-ը՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձին, եթե նա ծնվել է մինչեւ 1974 թվականի հունվարի 1-ը, ինչպես նաեւ «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված հիմքերով հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնից ազատված անձին:

Սույն իրավակարգավորումը հանգեցրեց այնպիսի իրավիճակի, երբ Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության եւ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի համակարգում երկարամյա աշխատանքային փորձ ունեցող, արհեստավարժ մի շարք դատախազներ եւ ծառայողներ կենսաթոշակ ստանալու իրենց իրավունքը կորցնելու մտավախությունից դրդված աշխատանքից ազատման դիմումներ ներկայացրեցին, քանի որ մինչեւ 2014 թվականի հուլիսի 1-ը ձեռք բերված կենսաթոշակի իրավունքը կորսվում է 2017 թվականի հուլիսի 1-ից, ինչպես նաեւ դրանից հետո նշանակվելիք կենսաթոշակի չափի հաշվարկի ցանկացած մեթոդ ավելի ցածր կենսաթոշակ է նախատեսում, քան վերը նշված իրավակարգավորման հիմքով կենսաթոշակի հաշվարկը:

Բացի այդ, Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքը 2017 թվականի հուլիսի 1-ից դադարելու դեպքում, այն որեւէ այլ իրավակարգավորումով չի փոխարինվում, նշված իրավունքը ձեռք բերած դատախազը, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության եւ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողներն իրենց իրավունքից չօգտվելու դեպքում կորցնելու են այդ հիմքով կենսաթոշակի անցնելու հնարավորությունը, այսինքն՝ դատախազը եւ ծառայողն ուղղակի զրկվելու են բարձր չափի կենսաթոշակային իրավունքից::

Համանման իրավիճակ է Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում եւ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում:

Վերոնշյալ իրավակարգավորումը հնարավորություն չի տալիս ՀՀ դատախազության, ՀՀ հատուկ քննչական ծառայության եւ ՀՀ քննչական կոմիտեի, ինչպես նաեւ մյուս իրավապահ մարմինների ղեկավարությանը ներդաշնակ կադրային եւ սերնդային փոփոխություններ կատարել, քանի որ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորման պայմաններում մասնագիտական

բազմամյա փորձ ունեցող եւ ՀՀ դատախազության համակարգի ու նշված իրավապահ մարմինների համար պահանջված դատախազները եւ ծառայողները, որոնք ներկայում աշխատում եւ կենսաթոշակ ստանալու իրավունքից օգտվելու հնարավորություն ունեն, պատրաստվում են եւ հարկադրված են այն չկորցնելու պատճառով 2017 թվականի հուլիսի 1-ից առաջ պաշտոնից ազատման դիմումներ ներկայացնել:

Առաջարկվող լուծումը եւ ակնկալվող արդյունքները.

Օրենքում եւ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում իրականացվելիք սույն փոփոխություններով հնարավորություն է տրվում դատախազի, ՀՀ հատուկ քննչական ծառայության եւ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնող այն անձանց, ովքեր համապատասխանաբար 2014 թվականի եւ 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեն, կենսաթոշակ ստանալու իրավունքից օգտվեն նաեւ 2017 թվականի հուլիսի 1-ից հետո՝ այդպիսով երաշխավորելով դատախազի, ՀՀ հատուկ քննչական ծառայության եւ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնող անձանց անկախության սոցիալական երաշխիքները, իրավական պետությանը հարիր կենսաթոշակի իրավունքից օգտվելու լեգիտիմ ակնկալիքը, ինչպես նաեւ ապահովելով ՀՀ դատախազության, ՀՀ հատուկ քննչական ծառայության եւ ՀՀ քննչական կոմիտեի համակարգում երկար տարիների մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող դատախազի, ՀՀ հատուկ քննչական ծառայության եւ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների հետագա աշխատանքը, նրանց միջոցով գիտելիքների եւ փորձի փոխանցումը, ինչպես նաեւ արդյունավետ եւ սահուն կադրային քաղաքականության իրականացումը, այսինքն՝ վերացվում է օրենսդրական այն խոչընդոտը, ինչը դրդում է 20 տարվա դատախազի, ՀՀ հատուկ քննչական ծառայության եւ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի աշխատանքային ստաժ ձեռքբերածներին առավել բարենպաստ կենսաթոշակային սոցիալական երաշխիքը չկորցնելու համար մինչեւ 2017 թվականի հուլիսի 1-ն օգտվել վերը նշված օրենքի դրույթով ամրագրված իրավակարգավորումից, իսկ ՀՀ դատախազության, ՀՀ հատուկ քննչական ծառայության եւ ՀՀ քննչական կոմիտեի ղեկավարությանը չի զրկում կայուն եւ սահուն կադրային քաղաքականություն վարելուց: Այսինքն՝ հանրային շահի տեսանկյունից՝ կապահովի ներդաշնակ սերնդային փոփոխություն:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	
1.	ՀՀ Կառավարություն	«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-002-24.05.2017) ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի. 1) վերնագրում «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություն և լրացում» բառերով. 2) 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-1-Ն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում՝ 2-րդ կետից հետո լրացնել նոր պարբերություն. «2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային	Ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը	Առաջարկությունն ընդունվել է

			ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված այն անձանց, ովքեր դատախազի կամ հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակվել են մինչև 2017 թվականի հունիսի 1-ը՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելուց հետո:»:		